



L.A. Care
Medicare Plus[™]
(HMO D-SNP)

Նպաստների ամփոփում 2024



L.A. Care Medicare Plus (HMO D-SNP) | 2024թ. նպաստների ամփոփում

Ներածություն

Այս փաստաթուղթը L.A. Care Medicare Plus-ի կողմից ապահովագրված նպաստների և ծառայությունների հակիրճ ամփոփումն է: Այն ներառում է հաճախակի տրվող հարցերի պատասխաններ, կապի կարևոր տեղեկություններ, մատուցվող նպաստների և ծառայությունների ակնարկ և տեղեկություններ Ձեր՝ որպես L.A. Care Medicare Plus-ի անդամ իրավունքների վերաբերյալ: Հիմնական եզրույթները ու դրանց սահմանումները երևում են այբբենական կարգով *Ապահովագրության ապացույցի վերջին գլխում:*

Բովանդակություն

A.	Հրաժարում պատասխանատվությունից	2
B.	Հաճախակի տրվող հարցեր (FAQ)	6
C.	Ապահովագրված ծառայությունների ցանկ	11
D.	L.A. Care Medicare Plus-ից դուրս ապահովագրվող նպաստներ.	31
E.	Ծառայություններ, որոնք ապահովագրված չեն L.A. Care Medicare Plus-ի, Medicare-ի և Medi-Cal-ի կողմից	32
F.	Ձեր իրավունքները՝ որպես ծրագրի անդամ	32
G.	Ինչպես գանգատ ներկայացնել կամ մերժված, հետաձգված կամ փոփոխված ծառայությունը բողոքարկել.	35
H.	Ինչ անել խարդախության կասկած ունենալու դեպքում	36

A. Հրաժարում պատասխանատվությունից



Սա L.A. Care Medicare Plus -ի կողմից ապահովագրված առողջապահական ծառայությունների ամփոփումն է 2024թ. համար: Սա ընդամենը ամփոփում է: Խնդրում ենք ընթերցել *Ապահովագրության ապացույցը*՝ նպաստների ամբողջական ցանկին ծանոթանալու համար: 2024թ. Անդամի ձեռնարկը հասանելի կլինի մեր կայքում՝ medicare.lacare.org, 2023թ. հոկտեմբերի 15-ից: Փոստով անվճար պատճեն ստանալու համար զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ **1-833-522-3767** (TTY՝ **711**) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:

- L.A. Care Medicare Plus (HMO D-SNP) առողջապահական ծրագիր է, որը պայմանագիր է կնքել և՛ Medicare-ի, և՛ Medi-Cal-ի հետ՝ երկու ծրագրերի նպաստները անդամագրված անձանց մատուցելու: L.A. Care Medicare Plus-ին անդամակցելը կախված է պայմանագրի թարմացումից:
- Սա ամբողջական ցանկ չէ: Նպաստներին վերաբերող տեղեկատվությունը հակիրճ ամփոփում է, այլ ոչ թե նպաստների ամբողջական նկարագրություն: Հավելյալ տեղեկությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ կամ ընթերցեք L.A. Care Medicare Plus-ի Անդամի ձեռնարկը:

• تنبيه: إذا كنت تتحدث اللغة عربي، فإن خدمات المساعدة اللغوية متاحة لك. كما تتوفر المساعدات والخدمات المجانية للأشخاص ذوي الإعاقة. كذلك، نوفر لك خدمات الترجمة الفورية مجاناً للرد على أي تساؤلات قد تكون لديك حول خططنا الصحية أو الدوائية للحصول على هذه الخدمات المجانية، ما عليك سوى الاتصال بنا على الرقم **1-833-522-3767** (TTY: **711**) ، على مدار 24 ساعة في اليوم، و ٧ أيام في الأسبوع، بما في ذلك أيام العطلات. علماً بأن هذه المكالمات مجانية.

- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Եթե հայերեն եք խոսում, լեզվական օգնության ծառայություններ են հասնում Ձեզ: Հասանելի են նաև անվճար օժանդակություններ և ծառայություններ հաշմանդամների համար: Մենք ունենք անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ՝ պատասխանելու մեր առողջապահական կամ դեղերի ծրագրի վերաբերյալ Ձեր որևէ հարցի: Այս անվճար ծառայություններից օգտվելու համար պարզապես զանգահարեք մեզ **1-833-522-3767** (TTY՝ **711**) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է:
- ចំណាប់អារម្មណ៍: បើសិនអ្នកនិយាយភាសាខ្មែរ សេវាជំនួយភាសា គឺមានសំរាប់អ្នក។ ជំនួយ និងសេវាឥតគិតថ្លៃ ក៏មាន សំរាប់មនុស្សពិការដែរ។ យើងមានសេវាអ្នកបកប្រែឥតគិតថ្លៃ ដើម្បីឆ្លើយសំណួរអ្វីមួយ ដែលអ្នកអាចមានអំពីគំរោងសុខភាព ឬឱសថរបស់យើង។ ដើម្បីទទួលសេវាឥតគិតថ្លៃទាំងនេះ គ្រាន់តែហៅមកយើង លេខ **1-833-522-3767** (TTY: **711**) 24 ម៉ោង មួយថ្ងៃ 7 ថ្ងៃ មួយអាទិត្យ រួមទាំងថ្ងៃបុណ្យផង។ ហៅឥតគិតថ្លៃ។



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

- 注意：如果您說中文，您可獲得語言協助服務。我們也為殘障人士提供免費輔助和服務。我們有免費口譯員服務以回答您對我們健康計劃或藥物計劃可能持有的任何疑問。若需要上述免費服務，您僅需致電 **1-833-522-3767 (TTY: 711)** 即可，服務時間為每週 7 天，每天 24 小時（包含假日）。上述電話均為免費

• یم دوجوم زین لول عم صاخشا یارب ناگیار تامدخ و دادم. دنشاب یم امش رای تخا رد ینابز دادم تامدخ، دینک یم تبحص یسراف نابز م رگا: هجوت رای تخا رد دیشاب متشاد ام یئوراد ای ینامرد موب دروم رد تسا نکمم مک یلاؤس هنوگره مبی یوگخس اپ یارب ار ناگیار یهافش مچرت تامدخ ام. دنشاب سامت یم سر تالی طعت لم اش، هتفه زور 7 و زور هنابش تعاس 24 رد، **1-833-522-3767 (TTY: 711)**، مرامش اب تس یفاک، تامدخ نی تفایرد یارب. میراد تس ناگیار سامت نی. دیری گب

- ध्यान दें: यदि आप हिन्दी बोलते हैं, तो आपके लिए भाषा सहायता सेवाएं, नशुल्क उपलब्ध हैं। वकिलांग लोगों के लिए मुफ्त सहायता और सेवाएं भी उपलब्ध हैं। हमारे स्वास्थ्य या दवा योजना के बारे में आपके किसी भी प्रश्न का उत्तर देने के लिए हमारे पास मुफ्त दुभाषिया सेवाएं हैं। ये नशुल्क सेवाएं प्राप्त करने के लिए, बस हमें **1-833-522-3767** पर कॉल करें। (TTY: 711), दिन के 24 घंटे, सप्ताह के 7 दिन, छुट्टियों सहित। फ़ोन करना मुफ्त है।
- CEEB TOOM: Yog tias koj hais lus Hmoob, yeej muaj cov kev pab txhais lus rau koj. Puav leej muaj cov neeg pab dawb thiab cov kev pab rau cov tib neeg muaj cov kev tsis taus. Peb muaj cov neeg txhais lus pab dawb los teb tej lus nug uas koj muaj txog peb lub tswv yim tswj xyuas kev noj qab haus huv thiab tshuaj. Xav tau cov kev pab dawb no, tsuas hu rau peb ntawm **1-833-522-3767 (TTY: 711)**, 24 teev ib hnuv twg, 7 hnuv ib lim tiam twg, nrog rau cov hnuv caiv. Hu xov tooj dawb xwb.
- ご注意：日本語を話される方は、言語支援サービスをご利用いただけます。障がいをお持ちの方は、援助とサービスも無料をご利用いただけます。私どもの医療保険プランや薬剤保険プランについてのご質問にお答えするために、無料の通訳サービスもご用意しています。これら無料サービスの利用をご希望の方は、**1-833-522-3767 (TTY: 711)**にて弊社までお電話ください。祝日を含む毎日24時間体制で受け付けております。この番号はフリーダイヤルです。
- 주의: 귀하가 한국인을 사용하는 경우 귀하는 언어 지원 서비스를 이용하실 수 있습니다. 장애가 있는 사람들을 위한 무료 지원 및 서비스 또한 이용하실 수 있습니다. 저희의 건강 또는 약품 플랜에 관한 귀하의 문의사항에 답변해드리기 위한 무료 통역 서비스가 마련되어 있습니다. 무료 서비스를 받으시려면 저희에게 **1-833-522-3767 (TTY: 711)** 번으로 공휴일 포함 주 7일, 하루 24시간 동안 전화하십시오. 통화료는 무료입니다.
- ເອົາໃຈໃສ່: ຖ້າທ່ານເວົ້າ ອັງກິດ, ການບໍລິການຊ່ວຍເຫຼືອດ້ານພາສາແມ່ນມີອັດສະລັບທ່ານ. ມີຄວາມຊ່ວຍເຫຼືອ ແລະ ການບໍລິການທົບຕໍ່ສຳລັບຄົນພິການອກິດວິຍ. ພວກເຮົາມີບໍລິການນາຍແປພາສາບໍ່ສຳລັບຄົນພິການອກິດວິຍ. ພວກເຮົາຈະມັກຮຽວກັບແຜນປະກັນສຸຂະພາບ ທີ່ແຜນການຢາຂອງພວກເຮົາ. ຖ້າຕ້ອງການຮູບການບໍລິການບໍ່ສຳລັບຄົນພິການ, ພຽງແຕ່ໂທມາຫາພວກເຮົາໃດທີ່ **1-833-522-3767 (TTY: 711)**, ຕະຫຼອດ 24 ຊົ່ວໂມງ, 7 ວັນຕໍ່ອາທິດ, ລວມທັງວັນພັກ. ການໂທແມ່ນບໍ່ສຳລັບຄ່າ.

- COR FIM JANGX LONGX OC: Beiv taux meih gorngv benx ang gitv waac nor, ninh mbuo se duqv mbenc maaih tengx nzie waac jauv-louc bun meih oc. Corc aengx zoix mbenc duqv maaih jaa-dorngx aengx caux gong-bou jauv-louc liouh bun nzie wuaaic fangx nyei buonc mienh. Yie mbuo mbenc maaih faan waac mienh wang-henh tengx nzie dau waac bun muangx dongh meih maaih waac qiex zuqc naaic gorngv taux yie mbuo goux heng-wangc a'fai ndie-daan wuov. Liouh zipv longc taux naaiv deix zuangx wang-henh jauv-louc nor, douc waac lorx taux yie mbuo yiem njiec naaiv **1-833-522-3767** (TTY: **711**), yietc hnoi yiem zuov benx 24 norm ziangh hoc, yietc norm leix baaiz bouc dauh yiem zuov benx 7 hnoi, lemh jienv hnoi-gingc yaac maiv dingh oc. Naaiv norm douc waac gorn se wang-henh longc.
- ਧਿਆਨ ਦਿਓ: ਜੇਕਰ ਤੁਸੀਂ ਪੰਜਾਬੀ ਬੋਲਦੇ ਹੋ, ਤਾਂ ਭਾਸ਼ਾ ਸਹਾਇਤਾ ਸੇਵਾਵਾਂ ਤੁਹਾਡੇ ਲਈ ਉਪਲਬਧ ਹਨ। ਅਪਾਰਜ ਲੋਕਾਂ ਲਈ ਮੁਫਤ ਸਹਾਇਤਾ ਅਤੇ ਸੇਵਾਵਾਂ ਵੀ ਉਪਲਬਧ ਹਨ। ਸਾਡੀ ਸਹਿਤ ਜਾਂ ਡਰੱਗ ਯੋਜਨਾ ਬਾਰੇ ਤੁਹਾਡੇ ਕਮਿ ਵੀ ਸਵਾਲ ਦਾ ਜਵਾਬ ਦੇਣ ਲਈ ਸਾਡੇ ਕੋਲ ਮੁਫਤ ਦੁਬਾਸੀਏ ਸੇਵਾਵਾਂ ਹਨ। ਇਹਨਾਂ ਮੁਫਤ ਸੇਵਾਵਾਂ ਨੂੰ ਪ੍ਰਾਪਤ ਕਰਨ ਲਈ, ਬੱਸ ਸਾਨੂੰ ਇਸ ਤੇ ਕਾਲ ਕਰੋ **1-833-522-3767** (TTY: **711**), ਇੱਕ ਦਿਨ ਦੇ 24 ਘੰਟੇ, ਹਫ਼ਤੇ ਦੇ 7 ਦਿਨ, ਛੁੱਟੀਆਂ ਸਮੇਤ। ਕਾਲ ਕਰਨਾ ਨਸ਼ਿਲਕ ਹੈ।
- ВНИМАНИЕ! Если вы не говорите по-Руски, вам будут оказаны услуги языковой поддержки. Лицам с инвалидностью предоставляются бесплатные услуги и средства. Мы предоставляем услуги устного перевода, чтобы ответить на любые вопросы о нашем плане страхования или лекарственного обеспечения. Чтобы воспользоваться этими бесплатными услугами, просто позвоните нам по телефону **1-833-522-3767** (линия TTY: **711**) 24 часа в сутки, 7 дней в неделю, включая праздничные дни. Звонок бесплатный.
- ATENCIÓN: Si habla español, tiene a su disposición servicios de asistencia idiomática. También hay asistencia y servicios gratuitos para las personas que tienen discapacidades. Tenemos servicios de interpretación gratuitos para responder cualquier pregunta que pueda tener acerca de nuestro plan de salud o de medicamentos. Para obtener estos servicios gratuitos, simplemente llámenos al **1-833-522-3767** (TTY: **711**), las 24 horas del día, los 7 días de la semana, incluso los días festivos. La llamada es gratuita.
- PAALALA: Kung nagsasalita kayo ng Tagalog, may makukuha kayong mga serbisyo ng tulong sa wika. Mayroon ding mga libreng tulong at serbisyo para sa mga taong may mga kapansanan. Mayroon kaming mga libreng serbisyo ng interpreter para sagutin ang anumang tanong ninyo tungkol sa aming planong pangkalusugan o panggamot. Para makuha ang mga libreng serbisyo ito, tawagan lang kami sa **1-833-522-3767** (TTY: **711**), 24 na oras sa isang araw, 7 araw sa isang linggo, kasama ang mga holiday. Libre ang tawag.
- โปรดทราบ : ถ้าคุณพูดภาษาไทย มีบริการความช่วยเหลือด้านภาษาให้แก่คุณ นอกจากนี้ ยังมีความช่วยเหลือและบริการต่าง ๆ ฟรีให้แก่บุคคลทุพพลภาพด้วย เรามีบริการล่ามฟรีเพื่อตอบคำถามที่คุณอาจมีเกี่ยวกับแผนประกันสุขภาพหรือยาของเรา ถ้าต้องการบริการฟรีเหล่านี้ โปรดโทรศัพท์ถึงเราที่ **1-833-522-3767** (สำหรับผู้บกพร่องทางการได้ยินหรือผู้ที่มีปัญหาในการพูด กด **711**) ได้ทุกวันตลอด 24 ชั่วโมง รวมทั้งวันหยุด โดยไม่เสียค่าใช้จ่ายใด ๆ



- **ВАЖЛИВО!** Якщо Ви розмовляєте українською, скористайтеся послугами мовної підтримки. Ми також безкоштовно надаємо спеціальні засоби зв'язку й послуги людям з особливими потребами. Скориставшись безкоштовними послугами перекладача, Ви можете отримати відповіді на будь-які запитання про план медичного страхування чи план страхового покриття лікарських засобів. Щоб безкоштовно отримати ці послуги, просто зателефонуйте нам на номер **1-833-522-3767** (TTY: **711**). Ми готові відповідати на Ваші дзвінки цілодобово, 7 днів на тиждень, у тому числі у святкові дні. Дзвінки безкоштовні.
- **LƯU Ý:** Nếu quý vị nói Tiếng Việt, chúng tôi sẵn có dịch vụ hỗ trợ ngôn ngữ dành cho quý vị. Chúng tôi cũng sẵn có những phương tiện trợ giúp và dịch vụ miễn phí dành cho người khuyết tật. Chúng tôi có dịch vụ thông dịch viên miễn phí để giải đáp bất kỳ thắc mắc nào quý vị có thể có về chương trình bảo hiểm sức khỏe hoặc chương trình thuốc của chúng tôi. Để nhận những dịch vụ miễn phí này, quý vị chỉ cần gọi cho chúng tôi theo số **1-833-522-3767** (TTY: **711**), 24 giờ mỗi ngày, 7 ngày trong tuần, kể cả ngày lễ. Cuộc gọi này miễn phí.
- Medicare-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար, կարող եք կարդալ *Medicare-ը և Դուք* (Medicare & You) ձեռնարկը: Այն պարունակում է Medicare-ի նպաստների, իրավունքների և պաշտպանությունների ամփոփում, ինչպես նաև Medicare-ի վերաբերյալ հաճախակի տրվող հարցերի պատասխանները: Կարող եք այն ստանալ Medicare-ի կայքից՝ (www.medicare.gov) կամ զանգահարելով **1-800-MEDICARE (1-800-633-4227)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտագործողները պետք է զանգահարեն **1-877-486-2048** հեռախոսահամարով: Medi-Cal-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք ստուգել Կալիֆոռնիայի Առողջապահական ծառայությունների վարչության (Department of Healthcare Services, DHCS) կայքը (www.dhcs.ca.gov/) կամ կապվել Medi-Cal-ի Օմբուդսմենի գրասենյակի հետ **1-888-452-8609** հեռախոսահամարով, երկուշաբթից ուրբաթ, ժամը 8:00-ից մինչև 17:00: Դուք կարող եք նաև զանգահարել հատուկ Օմբուդսմենին այն մարդկանց համար, ովքեր ունեն և՛ Medicare, և՛ Medi-Cal՝ **1-855-501-3077** հեռախոսահամարով, երկուշաբթից ուրբաթ, ժամը 9:00-ից մինչև 17:00:
- Այս փաստաթուղթը կարող եք ստանալ այլ ձևաչափերով, ինչպես օրինակ՝ խոշոր տպատառով, բրայլյան այբուբենով, կամ ձայնագրված: Զանգահարեք **1-833-522-3767** (TTY՝ **711**) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է:
- Այս փաստաթուղթը անվճար հասանելի է արաբերեն, հայերեն, չինարեն, պարսկերեն, քմերերեն, կորեերեն, ռուսերեն, իսպաներեն, տազալերեն և վիետնամերեն: Այս տարբերակները հասանելի են նաև մեր կայքում՝ medicare.lacare.org:
- Մեզնից կարող եք խնդրել, որ տեղեկությունները միշտ Ձեզ ուղարկենք Ձեզ անհրաժեշտ լեզվով կամ ձևաչափով: Սա կոչվում է մշտական խնդրանք: Մենք ուշադիր կհետևենք Ձեր մշտական խնդրանքին, որպեսզի Դուք առանձին խնդրանքներ չներկայացնեք ամեն անգամ, երբ մենք տեղեկություններ ուղարկենք Ձեզ: Այս փաստաթուղթն անգլերենից բացի մեկ այլ լեզվով և/կամ այլընտրանքային ձևաչափով ստանալու համար, խնդրում ենք դիմել Անդամների սպասարկման բաժին՝ **1-833-522-3767** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը: Ներկայացուցիչներից որևէ մեկը կարող է Ձեզ օգնել, որպեսզի ներկայացնեք կամ փոխեք մշտական խնդրանքը:



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

B. Հաճախակի տրվող հարցեր (FAQ)

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է հաճախակի տրվող հարցերը:

Հաճախակի տրվող հարցեր	Պատասխաններ
<p>Ի՞նչ է Medicare-Medi-Cal Coordination Plan-ը:</p>	<p>Medicare-Medi-Cal Coordination Plan-ը առողջապահական ծրագիր է, որը պայմանագիր ունի Medicare և Medi-Cal ծրագրերի հետ՝ այդ ծրագրերի նպաստներն ընդգրկված անդամներին տրամադրելու համար: Այն նախատեսված է 65 և ավելի բարձր տարիքի մարդկանց համար: Medicare-Medi-Cal Coordination Plan-ը մի կազմակերպություն է, որ բաղկացած է բժիշկներից, դեղատներից, Կառավարվող երկարաժամկետ ծառայությունների և աջակցության (Managed Long-term Services and Supports, MLTSS) մատակարարներից և այլ մատակարարներից: Այն նաև ունի խնամքի համակարգողներ՝ օգնելու Ձեզ կառավարել Ձեր բոլոր մատակարարներին, ինչպես նաև ծառայություններն ու օժանդակությունները: Նրանք բոլորն աշխատում են միասին՝ Ձեզ մատուցելու Ձեզ անհրաժեշտ խնամքը:</p>
<p>Ես կստանամ՞ նույն Medicare-ի և Medi-Cal-ի նպաստները L.A. Care Medicare Plus-ում, որոնք ստանում եմ հիմա:</p>	<p>Դուք կստանաք Ձեր ապահովագրված Medicare և Medi-Cal նպաստների մեծ մասը անմիջապես L.A. Care Medicare Plus-ից: Դուք կաշխատեք մի խումբ մատակարարների հետ, ովքեր կօգնեն որոշել, թե ո՞ր ծառայությունները լավագույնս կբավարարեն Ձեր կարիքները: Սա նշանակում է, որ որոշ ծառայություններ, որոնք Դուք այժմ ստանում եք, կարող են փոխվել՝ կախված Ձեր կարիքներից, և Ձեր բժշկի և խնամքի թիմի գնահատականներից: Դուք կարող եք նաև ստանալ այլ նպաստներ Ձեր առողջապահական ծրագրից դուրս, ինչպես հիմա եք անում, անմիջապես նահանգային կամ շրջանային գործակալությունից, ինչպիսիք են՝ Տնային աջակցության ծառայությունները (In-Home Support Services, IHSS), հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման խանգարման մասնագիտացված ծառայությունները, կամ տարածաշրջանային կենտրոնի ծառայություններ:</p> <p>Երբ անդամագրվեք L.A. Care Medicare Plus-ին, Դուք և Ձեր խնամքի խումբը գործակցաբար կմշակեք Անհատականացված Խնամքի ծրագիր, որպեսզի հասնեք Ձեր առողջապահական և աջակցության կարիքներին՝ արտացոլելով Ձեր անձնական նախասիրություններն ու նպատակակետերը:</p> <p>Եթե ընդունում եք Medicare-ի Part D-ի դեղատոմսով տրվող դեղերը, որոնք L.A. Care Medicare Plus-ը սովորաբար չի ապահովագրում, կարող եք ժամանակավոր պաշար ձեռք բերել, իսկ մենք Ձեզ կօգնենք, որպեսզի անցում կատարեք մեկ այլ դեղի կամ ձեռք բերեք բացառություն, որպեսզի L.A. Care Medicare Plus-ը ապահովագրի Ձեր դեղը, եթե այն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ այս էջի ներքևում նշված համարով:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Հաճախակի տրվող հարցեր	Պատասխաններ
<p>Կարո՞ղ եմ այցելել նույն բժիշկներին, որոնց ծառայություններից օգտվում եմ հիմա:</p>	<p>Հաճախ այդպես էլ լինում է: Եթե Ձեր մատակարարները (ներառյալ բժիշկները, հիվանդանոցները, թերապևտները, դեղատները, և այլ առողջապահական մատակարարները) աշխատում են L.A. Care Medicare Plus-ի հետ և պայմանագիր ունեն մեզ հետ, Դուք կարող եք շարունակել այցելել նրանց:</p> <ul style="list-style-type: none"> • Մատակարարները, որոնք պայմանագիր ունեն մեզ հետ, «ներցանցային» են: Ցանցի մատակարարները մասնակցում են մեր ծրագրին: Դա նշանակում է, որ նրանք ընդունում են մեր ծրագրի անդամներին և մատուցում են ծառայություններ, որոնք ընդգրկում է մեր ծրագիրը: Դուք պետք է օգտվեք L.A. Care Medicare Plus ցանցի մատակարարների ծառայություններից: Եթե օգտվում եք մատակարարներից կամ դեղատներից, որոնք մեր ցանցում չեն, ծրագիրը կարող է չվճարել այս ծառայությունների կամ դեղերի համար: • Եթե Ձեզ հարկավոր են հրատապ կամ արտակարգ իրավիճակի խնամքի կամ տարածքից դուրս դիալիզի ծառայություններ, կարող եք օգտագործել L.A. Care Medicare Plus-ի ցանցից դուրս գտնվող մատակարարների: • Եթե Դուք ներկայումս բուժում եք ստանում L.A. Care Medicare Plus-ի ցանցից դուրս գտնվող մատակարարից կամ հաստատված հարաբերություններ ունեք մատակարարի հետ, որը դուրս է L.A. Care Medicare Plus-ի ցանցից, զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ կապի մեջ մնալու մասին ստուգելու և խնամքի շարունակականություն խնդրելու համար: Եթե բժիշկները, որոնց Դուք ներկայումս այցելում եք, L.A. Care Medicare Plus-ի մատակարարների ցանցի մաս չեն կազմում, Ձեր բժշկին կամ հիվանդանոցին սահմանափակ ժամանակով պահելու հնարավորություն կա. սա կոչվում է խնամքի շարունակականություն: <p>Խնամքի շարունակականության (Continuity of Care, COC) իրավունակ լինելու համար՝</p> <ul style="list-style-type: none"> ◦ Դուք պետք է այցելեք Առաջնային խնամքի բժշկին (Primary Care Physician, PCP) և/կամ Մասնագետին առնվազն մեկ անգամ անցած 12 ամսվա ընթացքում և ունենաք առաջիկա ժամադրություն PCP-ի կամ Մասնագետի հետ հաջորդ 12 ամսվա ընթացքում: ◦ Ձեր Մատակարարը պետք է պատրաստ լինի ընդունել L.A. Care Health Plan-ի դրույքաչափերը և պայմանագիր կնքել համապատասխան բժշկական խմբի/IPA-ի հետ: ◦ Մատակարարը չունի խնամքի որակի վերաբերյալ որևէ փաստագրված մտահոգություն, որը կստիպի L.A. Care-ին կամ PPG-ին հեռացնել մատակարարին իր ցանցից: <p>Խնամքի շարունակականության յուրաքանչյուր հարցում պետք է լրացվի հետևյալ ժամանակաշրջանում.</p> <ul style="list-style-type: none"> ◦ Երեսուն (30) օրացուցային օր L.A. Care-ի կամ PPG-ի կողմից խնդրանքը ստանալու օրվանից, ◦ Տասնհինգ (15) օրացուցային օր, եթե անդամի առողջական վիճակը պահանջում է ավելի անհապաղ ուշադրություն, օրինակ՝ առաջիկա հանդիպումները կամ խնամքի այլ հրատապ կարիքները, կամ ◦ Երեք (3) օրացուցային օր, եթե անդամին վնաս պատճառելու վտանգ կա <p>Պարզելու, թե արդյոք Ձեր բժիշկները ծրագրի ցանցում են, զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ այս էջի ներքևում նշված հեռախոսահամարներով կամ կարդացեք L.A. Care Medicare Plus-ի <i>Մատակարարների և դեղատների տեղեկատու</i> ծրագրի կայքում՝ medicare.lacare.org:</p> <p>L.A. Care Medicare Plus-ը նոր է Ձեզ համար, մենք Ձեզ հետ գործակցաբար կմշակենք Անհատականացված խնամքի ծրագիր՝ Ձեր կարիքները բավարարելու համար:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Հաճախակի տրվող հարցեր	Պատասխաններ
Ի՞նչ է L.A. Care Medicare Plus-ի խնամքի կառավարիչը:	L.A. Care Medicare Plus-ի խնամքի կառավարիչն այն հիմնական անձն է, ում հետ Դուք պետք է կապվեք: Այս անձն օգնում է, որ կառավարեք Ձեր բոլոր մատակարարներին և ծառայությունները, ինչպես նաև ապահովում է Ձեզ անհրաժեշտ խնամքի ստացումը:
Ի՞նչ են Կառավարվող երկարաժամկետ ծառայությունները և աջակցությունները (MLTSS):	Կառավարվող երկարաժամկետ ծառայությունները և աջակցություններն օգնություն են այն մարդկանց համար, ում օգնություն է հարկավոր առօրյա գործերը կատարելու, ինչպիսիք են օրինակ՝ լողանալը, զուգարան գնալը, հագնվելը, ճաշ պատրաստելը և դեղ խմելը: Այս ծառայությունների մեծ մասը մատուցվում է Ձեր տանը կամ Ձեր համայնքում, սակայն կարող է մատուցվել ծերանոցում կամ հիվանդանոցում: Որոշ դեպքերում վարչաշրջանը կամ այլ գործակալություն կարող են կառավարել այս ծառայությունները, իսկ Ձեր խնամքի համակարգողը կամ խնամքի թիմը կաշխատի այդ գործակալության հետ:
Ի՞նչ է Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիրը (Multipurpose Senior Services Program, MSSP):	MSSP-ն ապահովում է շարունակական խնամքի համակարգում առողջապահական մատակարարների հետ Ձեր առողջապահական ծրագրից ավելին, և կարող է կապել Ձեզ այլ անհրաժեշտ համայնքային ծառայությունների և ռեսուրսների հետ: Այս ծրագիրը օգնում է Ձեզ ստանալ ծառայություններ, որոնք օգնում են Ձեզ ինքնուրույն ապրել Ձեր տանը:
Ի՞նչ կատահի, եթե ես ծառայության կարիք ունենամ, բայց ոչ ոք L.A. Care Medicare Plus ցանցում չկարողանա այն տրամադրել:	Ծառայությունների մեծ մասը կմատուցվի մեր ցանցի մատակարարների միջոցով: Եթե Ձեզ հարկավոր լինեն ծառայություններ, որոնք չեն կարող մատուցվել մեր ցանցի ներսում, L.A. Care Medicare Plus-ը կվճարի արտացանցային մատակարարի ծախսը:
Որտե՞ղ է հասանելի L.A. Care Medicare Plus-ը:	Այս ծրագրի սպասարկման տարածքն ընդգրկում է՝ Կալիֆորնիա նահանգի Լոս Անջելես վարչաշրջանը: Ծրագրին միանալու համար Դուք պետք է բնակվեք այս տարածքում:



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Հաճախակի տրվող հարցեր	Պատասխաններ
<p>Ի՞նչ է նախօրոք լիազորումը:</p>	<p>Նախօրոք լիազորում նշանակում է L.A. Care Medicare Plus-ի թույլտվություն՝ ծառայություններ փնտրելու մեր ցանցից դուրս կամ ծառայություններ ստանալու համար, որոնք սովորաբար չեն փոխհատուցվում մեր ցանցի կողմից, նախքան ծառայությունները ստանալը: L.A. Care Medicare Plus-ը չի կարող ապահովագրել ծառայությունը, բուժօրհոսությունը, ապրանքը կամ դեղը, եթե ձեռք չեք բերում նախօրոք լիազորում:</p> <p>Եթե Ձեզ հարկավոր են հրատապ կամ արտակարգ իրավիճակի խնամքի կամ տարածքից դուրս դիալիզի ծառայություններ, կարիք չունեք նախօրոք լիազորում ստանալու: L.A. Care Medicare Plus-ը Ձեզ կարող է Ձեզ կամ Ձեր մատակարարին տրամադրել ծառայությունների կամ բուժօրհոսությունների ցանկը, որոնք Ձեզնից պահանջում են նախօրոք լիազորում ստանալ L.A. Care Medicare Plus-ից՝ նախքան ծառայության մատուցումը: Եթե հարցեր ունեք այն մասին, թե արդյոք նախօրոք լիազորում է պահանջվում հատուկ ծառայությունների, բուժօրհոսությունների, ապրանքների կամ դեղերի համար, օգնության համար զանգահարեք Անդամների սպասարկման բաժնի կամ այս էջի ներքևում նշված հեռախոսահամարներով:</p>
<p>Ի՞նչ է ուղեգիրը:</p>	<p>Ուղեգիրը նշանակում է, որ Ձեր առաջնային խնամքի մատակարարը (PCP) պարտավոր է Ձեզ վավերացում տալ՝ նախքան կկարողանաք այցելել մի անձի, ով Ձեր PCP-ն չէ: Ուղեգիրը տարբերվում է նախօրոք լիազորումից: Եթե Դուք ուղեգիր չստանաք Ձեր PCP-ից, L.A. Care Medicare Plus-ը կարող է չփոխհատուցել ծառայությունները: L.A. Care Medicare Plus-ը Ձեզ կարող է տալ ծառայությունների ցանկը, որոնք Ձեզնից պահանջում են ուղեգիր ստանալ Ձեր PCP-ից՝ նախքան ծառայության մատուցումը:</p> <p>Հավելյալ տեղեկությունների համար, թե երբ անհրաժեշտ է ուղեգիր ձեռք բերել Ձեր PCP-ից, տե՛ս <i>Անդամի ձեռնարկը</i>:</p>
<p>Արդյոք ամսական գումար (որը նաև կոչվում է ապահովագրական վճար) վճարո՞ւմ եմ L.A. Care Medicare Plus-ի ներքո:</p>	<p>Ոչ: Քանի որ Դուք Medi-Cal ունեք, Դուք չեք վճարի որևէ ամսական ապահովագրական վճարներ, ներառյալ Ձեր Medicare Part B-ի ապահովագրական վճարը, Ձեր առողջության ապահովագրության համար:</p>
<p>Արդյոք ես չհատուցվող գումար վճարո՞ւմ եմ՝ որպես L.A. Care Medicare Plus-ի անդամ:</p>	<p>Ոչ: Դուք չեք վճարում չհատուցվող գումարները L.A. Care Medicare Plus-ում:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Հաճախակի տրվող հարցեր	Պատասխաններ
<p>Որքա՞ն է իմ գրպանից վճարվող առավելագույն գումարի չափը, որը ես պետք է վճարեմ բժշկական ծառայությունների համար՝ որպես L.A. Care Medicare Plus-ի անդամ:</p>	<p>L.A. Care Medicare Plus-ում բժշկական ծառայությունների համար ծախսերի բաշխում չկա, ուստի Ձեր գրպանից տարեկան ծախսերը կկազմեն \$0:</p>
<p>Արդյոք ես ունե՞մ դեղերի ապահովագրման բացթողում:</p>	<p>Ոչ: Քանի որ ունեք Medicaid, Դուք չեք ունենա Ձեր դեղերի ապահովագրման բացը:</p>
<p>Ի՞նչ կլինի, եթե ես կորցնեմ Medi-Cal-ի իրավունակությունը:</p>	<p>Եթե գտնվում եք մեր ծրագրի 3-ամսյա ժամկետում, որը համարվում է շարունակական իրավունակության ժամանակաշրջան, մենք կշարունակենք տրամադրել Medicare Advantage ծրագրի կողմից ծածկված Medicare-ի բոլոր նպաստները: Սակայն, այս ժամանակահատվածում մենք չենք շարունակի ծածկել Medicaid-ի նպաստները, որոնք ներառված են կիրառելի Medicaid նահանգային ծրագրում, ինչպես նաև չենք վճարի Medicare-ի ապահովագրական վճարները կամ ծախսերի բաշխումը, որոնց համար նահանգը այլապես պատասխանատու կլիներ, եթե Դուք չկորցնեիք Ձեր Medicaid-ի իրավունակությունը: Ծառայությունների Ձեր արժեքը կարող է փոխվել: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Անդամների ձեռնարկը:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

C. Ապահովագրված ծառայությունների ցանկ

Հետևյալ աղյուսակը համառոտ ակնարկ է Ձեզ թերևս անհրաժեշտ եղող ծառայությունների, Ձեր ծախսերի և նպաստների վերաբերյալ կանոնների մասին:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող եք ունենալ	Ձեր ծախսերը ներգանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք հիվանդանոցային խնամքի կարիք ունեք	Հիվանդանոցային կեցություն	\$0	<p>Հիվանդանոցային ծառայությունները ապահովագրվում են, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են համարվում Ձեզ բուժող բժշկի և L.A. Care Medicare Plus-ի կողմից: Չկան բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ապահովագրված օրերի սահմանափակումներ հիվանդանոցում յուրաքանչյուր անգամ մնալու համար:</p> <p>Բացառությամբ արտակարգ իրավիճակի դեպքերի, Ձեր բժիշկը պետք է տեղյակ պահի ծրագրին, որ Դուք հիվանդանոց եք ընդունվելու: Դուք պետք է այցելեք ցանցի բժիշկներին, մասնագետներին և հիվանդանոցները: Ցանցի հիվանդանոցների ոչ-արտակարգ իրավիճակի գործողությունների համար կարող է նախօրոք լիազորում պահանջվել:</p>
	Բժշկի կամ վիրաբույժի խնամք	\$0	Բժշկի և վիրաբույժի խնամքը տրամադրվում է Ձեր հիվանդանոցային կեցության ընթացքում: Կարող են նախօրոք լիազորության կանոններ կիրառվել, ինչպես նաև ուղեգրերի անհրաժեշտություն կարող է լինել:
	Ամբուլատոր հիվանդանոցային ծառայություններ, ներառյալ դիտարկումը	\$0	



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներգանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք բժշկի կարիք ունեք (շարունակությունը հաջորդ էջում)	Ամբուլատոր վիրահատական կենտրոնի (Ambulatory Surgical Center, ASC) ծառայություններ	\$0	Կարող են նախօրոք լիազորման կանոններ կիրառվել, ինչպես նաև ուղեգրերի անհրաժեշտություն կարող է լինել:
	Վնասվածքի կամ հիվանդության բուժման նպատակով այցերը	\$0	Եթե Ձեզ հարկավոր են հրատապ կամ արտակարգ իրավիճակի խնամքի կամ տարածքից դուրս դիպլիզի ծառայություններ, կարիք չունեք նախապես վավերացում ստանալու: Դուք պետք է այցելեք ցանցի բժիշկներին, մասնագետներին և հիվանդանոցները:
	Մասնագետի խնամք	\$0	Դուք պետք է այցելեք ցանցի բժիշկներին, մասնագետներին և հիվանդանոցները: Ցանցի հիվանդանոցների և մասնագետների համար նախօրոք լիազորում և ուղեգիր է պահանջվում:
	Քաջառողջության այցեր, ինչպես՝ ֆիզիկական քննությունը	\$0	Ամենամյա առողջության ամրապնդման նպատակով այց 12 ամիսը մեկ:
	Ձեր հիվանդությունը կանխելու համար խնամք, ինչպես՝ գրիպի դեմ սրսկումները և զննումներ քաղցկեղի համար:	\$0	Նախօրոք լիազորման կանոնների պահանջներ կարող են կիրառվել:



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք բժշկի կարիք ունեք (շարունակություն)	Ասեղնաբուժություն (Medicare Covered)	\$0	<p>Երկու այցի սահմանափակում յուրաքանչյուր ամիս: Հավելյալ այցերի թույլատվությունը հնարավոր է նախօրոք լիազորումով՝ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինելու դեպքում:</p> <p>Medicare-ի կողմից ապահովագրված ասեղնաբուժական այցերի համար՝ Մինչև 12 ասեղնաբուժական այց 90 օրվա ընթացքում, եթե ունեք քրոնիկ ստորին մեջքացավ: Հավելյալ 8 ասեղնաբուժական սեանս ստորին մեջքացավի համար, բարելավում ցույց տալու դեպքում: Հնարավոր է, որ Դուք չկարողանաք ավելի քան 20 ասեղնաբուժական բուժում ստանալ քրոնիկ ստորին մեջքացավի համար յուրաքանչյուր տարի: Ստորին մեջքացավի համար ասեղնաբուժական բուժումները պետք է դադարեցվեն Ձեր առողջական խնդիրը չբարելավվելու կամ վատթարանալու դեպքում:</p> <p>Կարող են նախօրոք լիազորման կանոններ կիրառվել, ինչպես նաև կարող է ուղեգրերի անհրաժեշտություն լինել:</p>
	«Բարի գալուստ Medicare» (կանխարգելիչ այց մեկ անգամ միայն)	\$0	<p>Ձեր նոր Part B-ի ապահովագրության առաջին 12 ամսվա ընթացքում Դուք կարող եք ստանալ կա՛մ «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այցը կա՛մ Տարեկան քաջառողջության այցը: Ձեր առաջին 12 ամիսներից հետո, Դուք կարող եք ստանալ Տարեկան քաջառողջության այց ամեն 12 ամիսը մեկ:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Ձեզ շտապ օգնություն է անհրաժեշտ	Շտապ օգնության սենյակի ծառայություններ	\$0	Արտակարգ իրավիճակի ապահովագրված բժշկական խնամք կարող էք ստանալ, երբ դրա կարիքն ունենաք Միացյալ Նահանգների կամ դրա տարածքների որևէ վայրում՝ առանց նախօրոք լիազորման կամ ուղեգրի: ԱՄՆ-ից և նրա տարածքներից դուրս ստացված արտակարգ իրավիճակի և հրատապ անհրաժեշտ ծառայությունները ծածկվում են մինչև \$10,000 ընդհանուր գումարով օրացուցային տարվա ընթացքում:
	Հրատապ խնամք	\$0	Դուք կարող էք ապահովագրված հրատապ խնամք ստանալ, երբ դրա կարիքն ունենաք Միացյալ Նահանգների կամ իր տարածքների որևէ վայրում՝ առանց նախօրոք լիազորման կամ ուղեգրի: Արտակարգ իրավիճակի և հրատապ անհրաժեշտ խնամքի ծառայությունները Միացյալ Նահանգներից դուրս, բոլորը մեկտեղ ապահովագրվում են տարեկան մինչև \$10,000 գումարով:
Բժշկական ստուգումների կարիք ունեք	Ախտորոշիչ ռադիոլոգիայի ծառայություններ (օրինակ՝ ռենտգենյան ճառագայթներ կամ այլ պատկերման ծառայություններ, ինչպիսիք են CAT սկանավորումը կամ MRI-ը)	\$0	Կարող են նախօրոք լիազորման կանոններ կիրառվել, ինչպես նաև կարող է ուղեգրերի անհրաժեշտություն լինել:
	Լաբորատոր թեստեր և ախտորոշիչ բուժօրոժողություններ, ինչպիսին է արյան անալիզը	\$0	Կարող են նախօրոք լիազորման կանոններ կիրառվել, ինչպես նաև կարող է ուղեգրերի անհրաժեշտություն լինել: Նախօրոք լիազորում կամ ուղեգիր չի պահանջվում COVID-19-ի ստուգմանն առնչվող ծառայությունների համար:
Ձեզ անհրաժեշտ են լսողության/լսողական ծառայություններ	Լսողության ստուգումներ	\$0	Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել:
	Լսողական սարքեր	\$0	



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող եք ունենալ	Ձեր ծախսերը ներգանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
<p>Դուք ատամնաբուժական խնամքի կարիք ունեք (շարունակությունը հաջորդ էջում)</p>	<p>Ատամնաբուժական զննումներ և կանխարգելիչ խնամք</p>	<p>\$0</p>	<p>Մեր ծրագիրը ծածկում է ատամնաբուժական ծառայություններ և բուժգործողություններ, ներառյալ՝</p> <ul style="list-style-type: none"> • Բերանի խոռոչի հետազոտություններ • Մաքրումներ՝ տարեկան 3 անգամ • Ֆտորիդային բուժում • Ռենտգեն պատկերում <p>Նպաստների բացառումներ և սահմանափակումներ կարող են կիրառվել: Հնարավոր է, որ բացառություններ լինեն, եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինի:</p> <p>Ծածկույթի կամ ատամնաբույժ մատակարարների ցանցի մանրամասն ցանկի համար կարող եք այցելել medicare.lacare.org կայքը կամ զանգահարել 1-855-522-8243 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:00, տեղական ժամանակով:</p> <p>Լրացուցիչ ատամնաբուժական ծառայությունները հասանելի են Medi-Cal Dental Program-ի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել կայք՝ dental.dhcs.ca.gov/ հասցեով:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք ատամնաբուժական խնամքի կարիք ունեք (շարունակություն)	Վերականգնողական և շտապ ատամնաբուժական խնամք	\$0	<p>Մեր ծրագիրը ծածկում է ատամնաբուժական ծառայությունները և բուժօրոժողությունները, ներառյալ հետևյալը</p> <ul style="list-style-type: none"> • Ախտորոշիչ • Վերականգնողական • Էնդոդոնտիա՝ 1 ատամի համար կյանքի ընթացքում • Պերիոդոնտիա • Հեռացումներ • Պրոթեզներ, բերանի խոռոչի վիրաբուժություն, այլ ծառայություններ <p>Նպաստների բացառումներ և սահմանափակումներ կարող են կիրառվել: Հնարավոր է, որ բացառություններ լինեն, եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինի:</p> <p>Please change this to- Ծածկույթի կամ ատամնաբույժ մատակարարների ցանցի մանրամասն ցանկի համար կարող եք այցելել medicare.lacare.org կայքը կամ զանգահարել 1-855-522-8243 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:00, տեղական ժամանակով:</p> <p>Նախօրոք լիազորման կանոնները նշված են Անդամի ձեռնարկում. կարող են կիրառվել ուղեգրման պահանջներ: Մասնագետի մոտ ուղեգրի լիազորումը կարող է կիրառվել, եթե բուժօրոժողությունը չի մտնում ընդհանուր ատամնաբույժի գործողության շրջանակում:</p> <p>Լրացուցիչ ատամնաբուժական ծառայությունները հասանելի են Medi-Cal Dental Program-ի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել կայք՝ dental.dhcs.ca.gov/ հասցեով:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներքանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք աչքի խնամքի կարիք ունեք:	Աչքի ստուգումներ	\$0	<p>Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ տեսողության ստուգումներ՝ աչքի առողջական խնդիրների և հիվանդությունների ախտորոշման և բուժման նպատակով, այդ թվում գլաուկոմայի տարեկան զննումը՝ վտանգի ենթակա մարդկանց համար:</p> <p>Մինչև 1 լրացուցիչ սահմանված կարգով աչքի ստուգում ամեն տարի:</p>
	Ակնոցներ կամ կոնտակտային ոսպնյակներ	\$0	<p>Մեկ զույգ ակնոց (ոսպնյակներ և շրջանակներ) կամ կոնտակտային ոսպնյակներ կատարակտի վիրահատությունից հետո:</p> <p>Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել:</p> <p>Ակնոցների (ոսպնյակներ և շրջանակներ) կամ կոնտակտային ոսպնյակներ մինչև \$500 ծրագրային ապահովագրության սահմանում՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ:</p>
	Տեսողության այլ խնամք	\$0	



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք հոգեկան առողջության ծառայությունների կարիք ունեք	Հոգեկան առողջության ծառայություններ	\$0	<p>Ապահովագրությունն ընգրկում է՝</p> <ul style="list-style-type: none"> • Անհատական թերապիա • Խմբային թերապիա • Ընտանեկան թերապիա • Դեղամիջոցի կառավարում/Հոգեբուժական գնահատում • Հոգեբանական ստուգում, երբ կլինիկապես ցուցված է՝ հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար • Մասնակի հիվանդանոցային բուժման ծրագիր (PHP) • Ստացիոնար հոգեբուժական խնամք <p>Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել:</p>
	Հոգեկան առողջության ծառայությունների կարիք ունեցող մարդկանց ստացիոնար և ամբուլատոր խնամք և համայնքային ծառայություններ	\$0	<p>Ապահովագրում ենք մինչև 190 օր ստացիոնար հոգեկան առողջության խնամք հոգեբուժական հիվանդանոցում՝ մինչև կյանքի վերջը: Ստացիոնար հոգեբուժական հիվանդանոցի ծառայությունները մտնում են մինչև կյանքի վերջը 190-օրվա սահմանափակման մեջ՝ որոշակի պայմաններ բավարարելու դեպքում միայն: Սահմանափակումը կիրառելի չէ ստացիոնար հոգեբուժական ծառայությունների համար, որոնք մատուցվում են ընդհանուր հիվանդանոցում:</p> <p>Ծրագիրն ապահովագրում է 90 օր ստացիոնար հիվանդանոցային կեցություն:</p> <p>Ծրագիրն ապահովագրում է մինչև կյանքի վերջը 60 պահեստային օր: \$0 համավճար մինչև կյանքի վերջը 60 պահեստային օրվա դիմաց:</p> <p>Բացառությամբ արտակարգ իրավիճակի դեպքերի, Ձեր բժիշկը պետք է տեղյակ պահի ծրագրին, որ Դուք հիվանդանոց եք ընդունվելու:</p> <p>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայությունների կարիք ունեք	Թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայություններ	\$0	<p>Թմրանյութերի չարաշահման ծառայություններն ընդգրկում են*¹</p> <ul style="list-style-type: none"> • Ստացիոնար թունազերծում • Ամբուլատոր բուժում • Ինտենսիվ ամբուլատոր բուժման ծառայություններ • Գործի կառավարում • Բուժում դեղամիջոցների օգնությամբ • Հեռացման կառավարում (ծանոթ նաև որպես Թունազերծում) • Ապաքինումը կամրջող բնակարան • Վերականգնողական աջակցության ծառայություններ • Թմրադեղերի (ափիոնի) բուժման ծառայություններ • Բնակարանային բուժում <p>Նախօրոք լիազորում թերևս կիրառելի լինի որոշ ծառայությունների համար:</p> <p>*Մի շարք ծառայություններ դուրս են թողնվել Lnu Անջելես վարչաշրջանի Հանրային առողջապահության թմրամիջոցների չարաշահման կանխարգելման և վերահսկման բաժնից (Department of Public Health, Substance Abuse Prevention and Control):</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
<p>Ձեզ հարկավոր է մի վայր՝ բնակվելու այնպիսի անձանց հետ, ովքեր հասանելի են Ձեզ օգնելու համար</p>	<p>Հմուտ բուժքույրական խնամք</p>	<p>\$0</p>	<p>Հմուտ բուժքույրական հաստատություն (Skilled Nursing Facility, SNF)</p> <p>Ձեր բժշկի կողմից համակարգում, նախօրոք լիազորման կանոններ և ուղղորդման պահանջներ կարող են կիրառելի լինել:</p> <p>SNF-ում յուրաքանչյուր կեցության համար ապահովագրված օրերի քանակի սահմանափակումներ չկան:</p> <p>Տանը մատուցվող առողջական խնամք</p> <p>Ներառում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ կարճաժամկետ ընդմիջվող հմուտ բուժքույրական խնամքը և վերականգնողական ծառայությունները:</p> <p>Կարող են նախօրոք լիազորման կանոններ կիրառվել, ինչպես նաև կարող է ուղեգրերի անհրաժեշտություն լինել:</p>
	<p>Ծերանոցի խնամք</p>	<p>\$0</p>	<p>Կարող է նախօրոք լիազորման կանոններ կիրառվել, ինչպես նաև կարող է ուղեգրերի անհրաժեշտություն լինել:</p>
	<p>Մեծահասակների խնամակալություն և մեծահասակների խմբակային խնամակալություն</p>	<p>\$0</p>	
<p>Կաթվածից կամ դժբախտ պատահարից հետո Ձեզ բուժում է հարկավոր</p>	<p>Օկուպացիոն, ֆիզիկական թերապիա կամ լոգոպեդիա</p>	<p>\$0</p>	<p>Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ֆիզիկական թերապիան, օկուպացիոն թերապիան և խոսքի և լեզվի պաթոլոգիական ծառայություններն ապահովագրվում են հիվանդանոցում կամ հմուտ բուժքույրական հաստատությունում Ձեր կեցության ընթացքում:</p> <p>Կարող են նախօրոք լիազորման և ուղղորդման պահանջներ կիրառվել՝ դուրս գրվելուց հետո շարունակվող ծառայությունների համար:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք օգնության կարիք ունեք առողջապահական ծառայություններ ստանալու համար	Շտապօգնության մեքենայի ծառայություններ	\$0	Նախօրոք լիազորում չի պահանջվում ցանցային և արտացանցային արտակարգ իրավիճակի շտապօգնության մեքենայի ծառայությունների համար: Շտապօգնության մեքենայի՝ ոչ-արտակարգ իրավիճակի ծառայությունների համար կարող է նախօրոք լիազորում կիրառելի լինել:
	Արտակարգ իրավիճակի փոխադրում	\$0	
	Բժշկական ժամադրությունների և ծառայությունների համար փոխադրում	\$0	<p>Սահմանված կարգով փոխադրություն</p> <p>Ուղեգրի պահանջներ կարող են կիրառվել</p> <p>Տարեկան անսահմանափակ երկկողմանի ուղևորություն դեպի ծրագրի կողմից վավերացված վայրերը:</p> <p>Ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրումներ</p> <p>Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:</p>
Ձեզ դեղեր են հարկավոր Ձեր հիվանդությունը կամ խնդիրը բուժելու համար (շարունակությունը հաջորդ էջում)	Medicare-ի B Մասի դեղատոմսային դեղեր	\$0	B Մասի դեղերն ընդգրկում են դեղեր, որոնք բժիշկը Ձեզ է տալիս իր գրասենյակում, մի շարք բերանով ընդունվող քաղցկեղի դեղեր, և մի շարք դեղեր, որոնք օգտագործվում են որոշակի բժշկական սարքերի հետ: Այս դեղերի մասին հավելյալ տեղեկության համար ընթերցեք <i>Ապահովագրության ապացույցը</i> : Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել:



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող եք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
<p>Ձեզ դեղեր են հարկավոր Ձեր հիվանդությունը կամ առողջական խնդիրը բուժելու համար (շարունակություն)</p>	<p>Ջեներիկ դեղեր (ոչ-ապրանքանիշով)</p>	<p>\$0՝ 30-օրյա պաշարի համար</p>	<p>Ապահովագրված դեղերի տեսականին կարող է սահմանափակ լինել: Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ L.A. Care Medicare Plus-ի <i>Ապահովագրված դեղերի ցանկը</i> (Դեղերի ցանկ):</p> <p>Այս ծրագիրն օգտագործում է Ապահովագրված դեղերի ցանկ (Դեղերի ցանկ): Դեղերի ցանկը կարող եք տեսնել medicare.lacare.org կայքում կամ կարող եք զանգահարել Անդամների սպասարկման բաժին, որպեսզի Դեղերի ցանկը փոստով ուղարկեն Ձեզ:</p> <p>Դեղերի ցանկում գտնվող մի շարք դեղեր կարող են պահանջել, որ նախ մեկ այլ դեղ փորձեք տվյալ առողջական խնդրի համար: Սա կոչվում է քրոնիկական խնդիրների բուժում:</p> <p>Ծրագիրը կարող է սահմանափակել դեղի քանակը, որն անդամը կարող է ստանալ: Սա կոչվում է քանակային սահմանափակումներ:</p> <p>Դեղերի ցանկում գտնվող մի շարք դեղեր պահանջում են ծրագրի նախօրոք լիազորում՝ դեղը վավերացվելուց առաջ:</p> <p>Որոշ ջեներիկ դեղերի համար երկարաձգված օրերով պաշարները (100 օր) հասանելի են ցանցի մանրածախ դեղատներում կամ փոստով պատվիրման միջոցով: Այս երկարաձգված օրերով պաշարների ծախսաբաժնի գումարը նույնն է, ինչ մեկամսյա դեղի պաշարը:</p> <p>Կարևոր հաղորդագրություն այն մասին, թե ինչ եք վճարում պատվաստումների համար . որոշ պատվաստանյութեր համարվում են բժշկական նպաստներ: Այլ պատվաստանյութեր համարվում են Part D-ի դեղեր: Դուք կգտնեք այս պատվաստանյութերի ցանկը ծրագրի ապահովագրված դեղերի ցանկում (Դեղերի ցանկ): Մեր ծրագրին ընդգրկում է Part D պատվաստանյութերի մեծ մասը՝ անվճար Ձեզ համար:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող եք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
<p>Ձեզ դեղեր են հարկավոր Ձեր հիվանդությունը կամ առողջական խնդիրը բուժելու համար (շարունակություն)</p>	Ապրանքանիշով դեղեր	\$0՝ 30-օրյա պաշարի համար	<p>Ապահովագրված դեղերի տեսականին կարող է սահմանափակ լինել: Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ L.A. Care Cal MediConnect Plan-ի <i>Ապահովագրված դեղերի ցանկը</i> (Դեղերի ցանկ):</p> <p>Այս ծրագիրն օգտագործում է Ապահովագրված դեղերի ցանկ (Դեղերի ցանկ): Դեղերի ցանկը կարող եք տեսնել medicare.lacare.org կայքում կամ կարող եք զանգահարել Անդամների սպասարկման բաժին, որպեսզի Դեղերի ցանկը փոստով ուղարկեն Ձեզ:</p> <p>Դեղերի ցանկում գտնվող մի շարք դեղեր կարող են պահանջել, որ նախ մեկ այլ դեղ փորձեք տվյալ առողջական խնդրի համար: Սա կոչվում է քրոնիկական խնդիրների բուժում:</p> <p>Ծրագիրը կարող է սահմանափակել դեղի քանակը, որն անդամը կարող է ստանալ: Սա կոչվում է քանակային սահմանափակումներ:</p> <p>Դեղերի ցանկում գտնվող մի շարք դեղեր պահանջում են ծրագրի նախօրոք լիազորումը՝ դեղը վավերացվելուց առաջ:</p> <p>Որոշ ջեներիկ դեղերի համար երկարաձգված օրերով պաշարները (100 օր) տրամադրելի են ցանցի մանրածախ դեղատներում կամ փոստով պատվիրման միջոցով: Այս երկարաձգված օրերով պաշարների ծախսաբաժնի գումարը նույնն է, ինչ մեկամսյա պաշարինը:</p>
	Առանց դեղատոմսի տրվող (Over-the-counter, OTC) դեղեր	\$0	<p>Ապահովագրված դեղերի տեսականին կարող է սահմանափակ լինել: Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ L.A. Care Medicare Plus-ի <i>Ապահովագրված դեղերի ցանկը</i> (Դեղերի ցանկ):</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք օգնության կարիք ունեք՝ ապաքինվելու համար կամ հատուկ առողջական կարիքներ ունեք	Վերականգնողական ծառայություններ	\$0	<p>Ամբուլատոր վերականգնողական ծառայություններ</p> <p>Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ֆիզիկական թերապիան, օկուպացիոն թերապիան և խոսքի և լեզվի պաթոլոգիական ծառայությունները ապահովագրվում են:</p> <p>Համակարգում Ձեր բժշկի կողմից, նախօրոք լիազորման կանոններ և ուղղորդման պահանջներ կարող են կիրառելի լինել:</p> <p>Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:</p> <p>Սրտային և թոքային վերականգնողական ծառայություններ</p> <p>Համակարգում Ձեր բժշկի կողմից, նախօրոք լիազորման կանոններ և ուղղորդման պահանջներ կարող են կիրառելի լինել:</p>
	Բժշկական սարքավորումներտնային խնամքի համար	\$0	<p>Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել:</p> <p>Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:</p>
	Դիալիզի ծառայություններ	\$0	<p>Բժշկական կենտրոնում կամ տանը մատուցվող դիալիզը ապահովագրվում է, երբ նշանակված է արտոնագրված մատակարարի կողմից:</p> <p>Տարածքից դուրս դիալիզ (մատուցվում է Ձեր վարչաշրջանից դուրս, սակայն ԱՄՆ տարածքում)</p> <p>Ապահովագրվում է նախօրոք լիազորումով, երբ Medicare արտոնագրված կենտրոնը ունի համապատասխան տարածք և բավականաչափ տեղեկություններ Ձեր մասին, որպեսզի կարողանա ճիշտ բուժում առաջարկել: L.A. Care Medicare Plus Car-ի Խնամքի կառավարիչը և Ձեր դիալիզի կենտրոնի սոցիալական աշխատողը կօգնեն Ձեզ դիալիզի կենտրոն գտնել Ձեր ճամփորդության ընթացքում:</p> <p>Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել:</p> <p>Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք ոտքի խնամքի կարիք ունեք:	Պոդիատրիկ ծառայություններ	\$0	Կարող են նախօրոք լիազորման կանոններ կիրառվել, ինչպես նաև կարող է ուղեգրերի անհրաժեշտություն լինել: Medicare-ի ապահովագրված պոդիատրիկ այցերը սահմանափակվում են ոտքի թաթի ստուգմամբ և բուժմամբ, եթե ունեք շաքարախտի հետ կապված նյարդերի վնասվածք և/կամ բավարարում եք որոշակի պայմաններ:
	Օրթեզների ծառայություններ	\$0	Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել:
Դուք երկարատև օգտագործման բժշկական սարքի (durable medical equipment, DME) կարիք ունեք Նշում. Սա ապահովագրված DME-ի ամբողջական ցանկ չէ: Ամբողջական ցանկի համար դիմեք Անդամների սպասարկման բաժին կամ տե՛ս <i>Ապահովագրության ապացույցի</i> Գլուխ 4-ը:	Անվասայլակներ, անթացուպեր և քայլակներ	\$0	Տրամադրվում են, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և նշանակվել են արտոնագրված մատակարարի կողմից: Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել: Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:
	Հեղուկացրիչներ	\$0	Տրամադրվում են, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և նշանակվել են արտոնագրված մատակարարի կողմից: Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել: Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:
	Թթվածնային սարքավորումներ և պաշարներ	\$0	Տրամադրվում են, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և նշանակվել են արտոնագրված մատակարարի կողմից: Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել: Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Դուք տանը բնակվելու համար օգնություն կարիք ունեք	Տանը մատուցվող առողջական ծառայություններ	\$0	Կարող են նախօրոք լիազորման կանոններ կիրառվել, ինչպես նաև կարող է ուղեգրերի անհրաժեշտություն լինել: Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:
	Տնային ծառայություններ, օրինակ՝ մաքրում կամ տնային տնտեսություն, կամ տնային փոփոխությունները, ինչպիսիք են ճաղավանդակները	\$0	Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել: Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար: MSSP-ի կամ IHSS-ի իրավասու անդամներ:
	Մեծահասակների ցերեկային առողջապահական խնամքի, մեծահասակների համայնքային ծառայություններ (Community Based Adult Services, CBAS) կամ այլ օժանդակ ծառայություններ	\$0	Կարող են նախօրոք լիազորման կանոններ կիրառվել, ինչպես նաև կարող է ուղեգրերի անհրաժեշտություն լինել: Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:
	Տերեկային խնամքի ծառայություններ	\$0	
	Ծառայություններ, որոնք կօգնեն Ձեզ ապրել ինքնուրույն (տնային առողջապահական ծառայություններ կամ անձնական խնամքի սպասավորի ծառայություններ)	\$0	Կարող է նախօրոք լիազորման կանոններ կիրառվեն և ուղեգրերի անհրաժեշտություն լինի: Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:
Լրացուցիչ ծառայություններ (շարունակությունը հաջորդ էջում)	Ոսկրահարդարման (խիրոպրակտիկ) ծառայություններ (Medicare-ի կողմից ապահովագրվող)	\$0	
	Գործի կառավարում	\$0	Ուղեգրի պահանջներ կարող են կիրառվել Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստներին վերաբերող տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Հավելյալ ծառայություններ (շարունակություն)	Շաքարախտի պաշարներ և ծառայություններ	\$0	<p>Շաքարախտի ինքնակառավարման վերապատրաստում. շաքարախտի վերահսկման պաշարներ. թերապևտիկ կոշիկներ կամ ներդիրներ:</p> <p>Շաքարախտի պաշարներն ու ծառայությունները սահմանափակվում են հատուկ արտադրողներով, արտադրանքներով և/կամ ապրանքանիշերով: Ապահովագրությամբ ծածկված պաշարների ցանկի համար խնդրում ենք կապ հաստատել ծրագրի հետ: Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել:</p>
	<p>Օգնություն որոշակի քրոնիկական առողջական խնդիրների դեպքում</p> <p>Առողջ սնունդ/ նպարեղեն, կոմունալ ծառայություններ և գազ գազալցակայանում</p>	\$0	<p>Մեր հաստատված մատակարարի միջոցով Դուք կստանաք կանխավճարային համակցված նպաստի Benefits Mastercard® Prepaid Card՝ ամսական \$65 (առանց երկարաձգման) մթերքների/նպարեղենի, կոմունալ ծառայությունների (Էլեկտրաէներգիա, գազ, ջեռուցման յուղ, սանիտարական, Ջուր) և գազի համար գազալցակայանում:</p> <p>Ձեր ծրագիրն ունի Հատուկ լրացուցիչ նպաստներ քրոնիկական հիվանդների համար (Special Supplemental Benefits for the Chronically, SSBCI): Այս հավելյալ նպաստն առաջարկվում է միայն բարձր ռիսկային, քրոնիկական հիվանդ անդամներին, ովքեր նաև համապատասխանում են իրավունակության լրացուցիչ չափանիշներին: Այս SSBCI նպաստին համապատասխանելու համար Դուք պետք է լրացնեք առողջության ռիսկի տարեկան գնահատում: Դուք նաև պետք է ունենաք համապատասխան քրոնիկական առողջական խնդիր: Այս առողջական խնդիրը պետք է լինի կյանքին վտանգ սպառնացող, հաշմանդամության և/կամ Ձեզ հոսպիտալացման կամ վատառողջության վտանգի ենթարկի:</p> <p>Այս նպաստը քրոնիկական հիվանդների համար հատուկ լրացուցիչ ծրագրի մաս է կազմում: Ոչ բոլոր անդամներն են իրավասու: Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ Ձեր Անդամի ձեռնարկի 4-րդ Գլուխը:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող եք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Հավելյալ ծառայություններ (շարունակություն)	Տնային աջակցության ծառայություններ	\$0	Դուք տարեկան մինչև 60 ժամ Papa Pals ընկերակցության և օգնության հասանելիություն ունեք: Ձեր ընտրած ընկերը (Pal) կարող է օգնել առօրյա կյանքի անկախ գործողություններում, ինչպիսիք են թեթև գործերը, վարժությունները, տեխնիկական աջակցության ծառայությունները, սոցիալական գործունեությունը, բժշկի մոտ, L.A. Care-ի համայնքային ռեսուրս կենտրոններ ուղևորությունները և ավելին:
	Բուժքույրական հաստատություն Բնակության վայրում ծառայություններ	\$0	<ul style="list-style-type: none"> • Ոսկրահարդարման խնամք և ոտքերի խնամք • Տեսողական և ատամնաբուժական խնամք • Ասեղնաբուժություն • Լսողության ստուգումներ <p>Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել: Դիմեք L.A. Care Medicare Plus լրացուցիչ մանրամասների համար:</p>
	SilverSneakers® Ամրակազմության նպաստներ	\$0	<p>L.A. Care Medicare Plus-ն առաջարկում է ամրակազմության նպաստ SilverSneakers®-ի միջոցով:</p> <p>SilverSneakers®-ը ամրակազմության նպաստ է, որը կարող է օգնել Ձեզ ավելի առողջ, ակտիվ կյանք վարել ամրակազմության և սոցիալական կապի միջոցով:</p> <ul style="list-style-type: none"> • SilverSneakers®-ն առաջարկում է մուտք դեպի մասնակից վայրերի համազգային ցանց, որտեղ Դուք կարող եք մասնակցել դասերին և օգտագործել մարզասարքեր և այլ հարմարություններ: Ցանկացած ժամանակ գրանցվեք այնքան վայրերում, որքան ցանկանում եք: Դուք նաև մուտք ունեք հրահանգիչներին, ովքեր վարում են հատուկ նախագծված խմբակային վարժությունների դասեր՝ անձամբ և առցանց, շաբաթը յոթ օր: <p>SilverSneakers-ը Tivity Health, Inc.-ի գրանցված ապրանքանիշն է: © 2023 Tivity Health, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են:</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող էք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Հավելյալ ծառայություններ (շարունակություն)	Առանց դեղատոմսի տրվող դեղեր (OTC) նպաստ	\$0	<p>Դուք ապահովագրված եք մինչև \$180 եռամսյակը մեկ (3 ամիսը մեկ) հաստատված առանց դեղատոմսի OTC առողջության և քաջառողջության ապրանքների համար, ինչպիսիք են հագի և մրսածության դեղամիջոցները, վիտամինները, ցավը հանգստացնող միջոցները, վիրակապերը և COVID-19-ի առանց դեղատոմսի թեստերը: Մնացորդը չի տեղափոխվում հաջորդ եռամսյակ:</p> <p>Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման բաժին՝ 1-833-522-3767 (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:</p>
	Անձնական արտակարգ իրավիճակի Արձագանքի համակարգ (Personal Emergency Response System, PERS)	\$0	
	Պրոթեզավորման ծառայություններ	\$0	Նախօրոք լիազորման կանոններ կարող են կիրառվել:
	Սովորական ասեղնաբուժություն, ոսկրահարդարում և թերապևտիկ մերսում	\$0	Դուք ապահովագրված եք ամեն տարի մինչև 45 այց (համակցված) մասնակից մատակարարի մոտ՝ սովորական ասեղնաբուժության, սովորական ոսկրահարդարման կամ մերսման թերապիայի այցերի համար: Այս համակցված նպաստն առաջարկվում է ի լրումն բժշկական անհրաժեշտության համար նախատեսված Ձեր Medicare-ի և Medi-Cal-ի ապահովագրված ասեղնաբուժության և քիրոպրակտիկ ծառայությունների բուժմանը:
	Սովորական պողիատրիա	\$0	Դուք ապահովագրված եք ամեն տարի մինչև 12 այց
	Հեռաառողջապահական ծառայություններ	\$0	Հասանելի է առաջնային խնամքի բժշկի ծառայությունների համար
	Տարեկան բժշկական ստուգում	\$0	Դուք ապահովագրված եք տարեկան 1 այցելության համար



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Առողջական կարիք կամ խնդիր	Ծառայություններ, որոնց կարիքը կարող եք ունենալ	Ձեր ծախսերը ներցանցային մատակարարների համար	Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ)
Հավելյալ ծառայություններ (շարունակություն)	Քաջառողջության/ Կրթության և այլ լրացուցիչ նպաստներ և ծառայություններ	\$0	<p>Ծրագիրը ապահովագրում է առողջության և քաջառողջության կրթության հետևյալ լրացուցիչ ծառայությունները և ծրագրերը՝</p> <ul style="list-style-type: none"> • Առողջապահական կրթություն • Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ
	Ծաշի նպաստներ	\$0	Այս նպաստը տրամադրում է օրական 2 անգամյա սնունդ մինչև 14 օրվա ընթացքում՝ ընդհանուր առաքված 28 սնունդով՝ ստացիոնար հիվանդանոցում կամ հմուտ բուժքույրական հաստատությունում (SNF) դուրս գրվելուց հետո: Կապվեք Ձեր մատակարարի կամ խնամքի կառավարչի հետ՝ ուղեգիր ստանալու համար:
	Ճառագայթային բուժում	\$0	
	Ծառայություններ, որոնք կարող են օգնել՝ կառավարելու Ձեր հիվանդությունը	\$0	

Նպաստների վերոնշյալ ամփոփագիրը տրամադրվում է միայն տեղեկատվական նպատակներով և նպաստների ամբողջական ցանկ չէ: Ամբողջական ցանկի և Ձեր նպաստների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կարդալ L.A. Care Medicare Plus-ի *Անդամի ձեռնարկը*: Եթե չունեք *Անդամի ձեռնարկը*, զանգահարեք L.A. Care Medicare Plus Անդամների Ծառայություններ այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով, որպեսզի ստանաք այն: Եթե հարցեր ունեք, կարող եք նաև զանգահարել Անդամների սպասարկման բաժին կամ այցելել medicare.lacare.org:

D. Նպաստներ, որոնք ապահովագրված են L.A. Care Medicare Plus-ից դուրս

Կան որոշ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ, և որոնք ապահովագրված չեն L.A. Care Medicare Plus-ի կողմից, սակայն ապահովագրված են Medicare-ի, Medi-Cal-ի կամ նահանգային կամ վարչաշրջանի գործակալության կողմից: Սա ամբողջական ցանկ չէ: Զանգահարեք Անդամների սպասարկման բաժին *կամ* այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով՝ այս ծառայությունների մասին տեղեկություններ ստանալու համար:

Այլ ծառայություններ, որոնք ապահովագրված են Medicare-ի, Medi-Cal-ի կամ նահանգային գործակալության կողմից	Ձեր ծախսերը
<p>Ատամնաբուժական ծառայություններ</p> <p>L.A. Care Medicare Plus-ի անդամներին Ատամնաբուժական նպաստները հասանելի են Medi-Cal Dental-ի միջոցով: Որոշ ատամնաբուժական ծառայություններ, ներառյալ՝ մաքրում, պլումբում և պրոթեզներ, հասանելի են Medi-Cal Dental Program-ի միջոցով:</p> <p>Medi-Cal Dental-ը կտրամադրի տարեկան մինչև \$1,800 գումարի չափով ապահովագրական ծառայություններ և, հնարավոր է, ավելի շատ, եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, կամ եթե Դուք բնակվում եք ծերանոցում: Ձեր ապահովագրության մասին հարցերի կամ Ձեր տարածքում Medi-Cal-ի ատամնաբույժ գտնելու օգնության համար զանգահարեք 1-800-322-6384 կամ TTY՝ 1-800-735-2922 համարով կամ այցելեք www.denti-cal.ca.gov կայքը:</p>	\$0
Որոշ հոսփիսային խնամքի ծառայություններ, որոնք ծածկված են L.A. Care Medicare Plus-ից դուրս	\$0
Հոգեւոցիալական վերականգնում	\$0
Նպատակային գործի կառավարում	\$0
Հանգստի տան սենյակ և սնունդ	\$0
Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ծրագիր	\$0
Մասնագիտացված հոգեկան առողջության և թմրանյութերի օգտագործման խանգարում	\$0
Օժանդակվող ապրելակերպ	\$0
Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիր (MSSP)	\$0
Տարածաշրջանային կենտրոնի ծառայություններ	\$0



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

E. Ծառայություններ, որոնք ապահովագրված չեն L.A. Care Medicare Plus-ի, Medicare-ի և Medi-Cal-ի կողմից

Սա ամբողջական ցանկ չէ: Զանգահարեք Անդամների սպասարկման բաժին այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով՝ այլ բացառված ծառայությունների մասին տեղեկություններ ստանալու համար:

Ծառայություններ, որոնք ապահովագրված չեն L.A. Care Medicare Plus-ի, Medicare-ի և Medi-Cal-ի կողմից	
Զույգերի թերապիա	Երկարաժամկետ օգտագործման որոշ բժշկական սարքեր (DME), ինչպիսիք են՝ աստիճանների վերելակները, խոնավությունը նվազեցնող սարքերը, հեռախոսային ահագանգի համակարգերը և ջակուզիները: Եթե հարցեր ունեք կամ եթե վստահ չեք, թե արդյոք Ձեր DME-ն ապահովագրված է, խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման բաժին հավելյալ տեղեկություններ ստանալու համար:

F. Ձեր իրավունքները՝ որպես ծրագրի անդամ

Որպես L.A. Care Medicare Plus-ի անդամ, Դուք ունեք որոշակի իրավունքներ: Դուք այս իրավունքները կարող եք կիրառել առանց պատժի ենթարկվելու: Կարող եք նաև այս իրավունքներն օգտագործել առանց կորցնելու Ձեր առողջական խնամքի ծառայությունները: Մենք Ձեզ տարին առնվազն մեկ անգամ կհուշենք Ձեր իրավունքների մասին: Ձեր իրավունքների վերաբերյալ հավելյալ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք ընթերցել *Անդամի ձեռնարկը*: Ձեր իրավունքներն ընդգրկում, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- **Դուք հարգանքի, արդարության և արժանապատվության իրավունք ունեք: Սա ընդգրկում է հետևյալը կատարելու իրավունք՝**
 - Ապահովագրված ծառայություններ ստանալու՝ առանց մտահոգվելու բժշկական վիճակի, առողջական կարգավիճակի, առողջապահական ծառայություններ ստանալու, ապահովագրական արձանագրությանների, բժշկական պատմության, հաշմանդամության (ներառյալ մտավոր խանգարումների), ամուսնական կարգավիճակի, տարիքի, սեռի (ներառյալ սեռական կարծրատիպերը և գենդերային ինքնությունը) սեռական կողմնորոշման, ազգային պատկանելության, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, դավանանքի կամ հասարակական օգնության
 - Անվճար տեղեկատվություն այլ լեզուներով և ձևաչափերով (օրինակ՝ մեծատառ, բրայլյան այբուբենով կամ աուդիո տարբերակ)
 - Ազատ մնալու որևէ ֆիզիկական կաշկանդանքից կամ առանձնացումից



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

- **Դուք իրավունք ունեք տեղեկություններ ստանալ Ձեր առողջապահական խնամքի մասին: Սա ընդգրկում է տեղեկություններ Ձեր բուժման և բուժման ընտրանքների վերաբերյալ: Այս տեղեկատվությունը պետք է Ձեզ հասկանալի ձևաչափով լինի: Սա ներառում է տեղեկատվություն ստանալու իրավունքը հետևյալի վերաբերյալ՝**
 - Մեր ապահովագրած ծառայությունների նկարագրության մասին
 - Ծառայություններն ստանալու ձևի մասին
 - Ծառայությունների գնի մասին
 - Առողջապահական խնամքի մատակարարների անունները
- **Դուք իրավունք ունեք որոշումներ կայացնելու Ձեր խնամքի վերաբերյալ, ներառյալ բուժման մերժումը: Սա ընդգրկում է հետևյալը կատարելու իրավունքը՝**
 - Ընտրելու առաջնային խնամքի մատակարար (Primary Care Provider, PCP), ինչպես նաև Ձեր PCP-ն տարվա ընթացքում ցանկացած պահի փոխելու
 - Առանց ուղեգրի այցելելու կանանց առողջական խնամքի մատակարարի
 - Արագորեն ստանալու Ձեր ապահովագրված ծառայություններն ու դեղերը
 - Տեղյակ լինելու բուժման բոլոր ընտրանքների մասին, անկախ նրանից՝ որքան դրանք արժեն և ապահովագրված են, թե՛ ոչ
 - Մերժելու բուժումը, նույնիսկ եթե Ձեր առողջապահական խնամքի մատակարարը հակառակ խորհուրդ տա
 - Դադարելու դեղի ընդունումը, նույնիսկ եթե Ձեր առողջական խնամքի մատակարարը հակառակ խորհուրդ տա
 - Երկրորդ կարծիք խնդրեք: L.A. Care Medicare Plus-ը կվճարի Ձեր երկրորդ կարծիքի այցի ծախսը
 - Ձեր առողջապահական ցանկությունները նախնական հրահանգով հայտնի դարձրեք
- **Դուք իրավունք ունեք ժամանակին ձեռք բերելու խնամք, որը որևէ հաղորդակցման կամ ֆիզիկական մուտքի որևէ արգելք չունի: Սա ընդգրկում է հետևյալը կատարելու իրավունքը՝**
 - Ժամանակին բժշկական խնամք ստանալու
 - Առողջական խնամք մատակարարի ընդունարան մուտք ու ելք ունենալու: Սա նշանակում է անարգել մուտք հաշմանդամ անձանց համար, համաձայն Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի (Americans with Disabilities Act)
 - Բանավոր թարգմանիչների օգնությունն ստանալու, որպեսզի հաղորդակցվեք Ձեր բժշկական խնամքի մատակարարի և Ձեր առողջապահական ծրագրի հետ



- **Իրավունք ունեք արտակարգ իրավիճակի և հրատապ խնամք խնդրելու, երբ որ դրա կարիքն ունենաք: Սա նշանակում է հետևյալը կատարելու իրավունքը՝**
 - Ստանալ արտակարգ իրավիճակների ծառայություններ առանց նախօրոք լիազորման
 - Դիմել արտացանցային անհետաձգելի կամ շտապ օգնության խնամքի մատակարարին, երբ կա դրա անհրաժեշտությունը
- **Դուք գաղտնիության և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք ունեք: Սա ընդգրկում է հետևյալը կատարելու իրավունք՝**
 - Խնդրելու և ստանալու Ձեր բժշկական արձանագրությունների պատճենն այնպիսի եղանակով, որը կկարողանաք հասկանալ, ինչպես նաև խնդրելու, որ Ձեր արձանագրությունները փոխվեն կամ ուղղվեն
 - Ձեր անձնական առողջական տեղեկությունների գաղտնի պահպելու
- **Դուք իրավունք ունեք բողոք ներկայացնելու կամ բողոքարկելու մերժված, հետաձգված կամ փոփոխված ծառայությունը. տես ստորև բաժին G-ն: Սա ընդգրկում է հետևյալը կատարելու իրավունք՝**
 - Գանգատ կամ բողոք ներկայացնելու մեր կամ մեր մատակարարների դեմ:
 - Մեր կամ մեր մատակարարների կողմից կայացված որոշակի որոշումներ բողոքարկելու
 - Բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահության վարչություն (Department of Managed Health Care, DMHC) անվճար հեռախոսահամարով (1-888-466-2219) կամ TDD գծով (1-877-688): -9891)՝ լսողության և խոսքի դժվարությունների համար: DMHC-ի կայքն (www.dmhca.gov/) ունի առցանց գանգատի ձևաթղթեր, Անկախ բժշկական վերանայման (Independent Medical Review, IMR) դիմումի ձևաթղթեր և հրահանգներ:
 - Խնդրեք DMHC-ից Medi-Cal ծառայությունների կամ բժշկական բնույթի պարագաների IMR:
 - Նահանգային լսում խնդրել
 - Մանրամասն պատճառաբանություն ստացեք, թե ինչու են ծառայությունները մերժվել և խնդրեք որոշում կայացնելու համար օգտագործված ամբողջ տեղեկատվության անվճար պատճենները

Ձեր իրավունքների վերաբերյալ հավելյալ հարցերի համար կարող եք ընթերցել *Անդամի ձեռնարկը*: Եթե հարցեր ունեք, կարող եք զանգահարել L.A. Care Medicare Plus Անդամների Ծառայություններ այս էջի ներքևում նշված համարով:

Այն մարդիկ, ովքեր ունեն Medicare և Medi-Cal, կարող են նաև զանգահարել հատուկ Օմբուդսմենին՝ 1-855-501-3077 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 9:00-ից 17:00 կամ Օմբուդսմենի Medi-Cal գրասենյակ՝ 1-888-452-8609 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-ից 17:00:



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: **Հավելյալ տեղեկությունների համար**, այցելեք medicare.lacare.org կայքը:

Գ. Ինչպես գանգատ ներկայացնել կամ մերժված, հետաձգված կամ փոփոխված ծառայությունը բողոքարկել

Եթե բողոք ունեք կամ կարծում եք, որ L.A. Care Medicare Plus-ը ոչ պատշաճ կերպով մերժել, հետաձգել կամ փոփոխել է ծառայությունը, զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով: Դուք կարող եք բողոքարկել մեր որոշումը:

Բողոքների և բողոքարկումների վերաբերյալ հարցերի համար կարող եք կարդալ *Ապահովագրության ապացույցի* 9-րդ գլուխը: Կարող եք զանգահարել նաև L.A. Care Medicare Plus Անդամների Ծառայությունների բաժին՝ այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով:

Գանգատների, բողոքների և բողոքարկումների համար կարող եք նաև մեզ հետ կապ հաստատել հետևյալ ձևերով՝

Ֆաքս՝ 1-213-438-5748

Փոստ՝ L.A. Care Medicare Plus

Attention: Appeals and Grievance -348

1055 W 7th Street

Los Angeles, CA 90017

Առցանց՝ www.lacare.org/online-grievance-form

Գանգատների, բողոքների և բողոքարկումների համար կարող եք նաև օգտագործել Կառավարվող առողջապահական խնամքի բաժնի Բժշկական անկախ վերանայման (IMR) և Գանգատի գործընթացը հետևյալ միջոցներով՝

Հեռախոս՝ 1-888-466-2219

TTY՝ 1-877-688-9891

Առցանց՝ www.dmhca.gov

DMHCի կայքն ունի առցանց գանգատի ձևաթղթեր, IMR-ի դիմումի ձևաթղթեր և հրահանգներ:



Ինչ անել խարդախության կասկած ունենալու դեպքում

Ծառայություններ մատուցող առողջապահական խնամքի մասնագետների և կազմակերպությունները մեծ մասն ազնիվ են: Ցավոք, կարող են գտնվել անազնիվ անձինք:

Եթե կարծում եք, որ որևէ բժիշկ, հիվանդանոց կամ այլ դեղատուն ինչ-որ բան սխալ է կատարում, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ:


- Զանգահարեք մեզ՝ L.A. Care Medicare Plus Անդամների ծառայություններ: Հեռախոսահամարները կարող եք գտնել այս ամփոփման կազմի վրա:
- Կամ զանգահարեք Medi-Cal-ի Հաճախորդի սպասարկման կենտրոն՝ 1-800-841-2900 հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-800-497-4648:
- Կամ զանգահարեք Medicare 1-800-MEDICARE (1-800-633-4227) համարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048: Այս համարներով զանգերն անվճար են, շաբաթը 7 օր, օրը 24 ժամ, ներառյալ տոնական օրերը:
- Խարդախության մասին կարող եք զեկուցել.
 - Էլեկտրոնային միջոցներով reportingfraud@lacare.org կայքում
 - Անանուն՝ L.A. Care-ի Խարդախության թեժ հեռախոսագծի (800) 400-4889 համարով

Եթե ունեք ընդհանուր բնույթի հարցեր, կամ հարցեր մեր ծրագրի, ծառայությունների, հաշիվ ներկայացնելու կամ անդամության քարտի վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել L.A. Care Medicare Plus -ի Անդամների սպասարկում՝

1-833-522-3767 Այս համարով հեռախոսազանգերն անվճար են: Օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը
Անդամների սպասարկումը նաև տրամադրում է բանավոր թարգմանության անվճար ծառայություններ անգլերեն չխոսողների համար: TTY՝ 711

Այս համարով հեռախոսազանգերն անվճար են: Օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը





L.A. Care
HEALTH PLAN®



Անվճար հեռախոսահամար՝
1.833.522.3767 | TTY՝ 711



lacare.org